

Ս Ի Ո Ն

ԺԵ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1941

ՊԱՐՏ - ԱՊՐԻԼ

ԹԻԻ 3-4

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութիւնը ժամանակ մը ի վեր բոլրակցութեան առիք էր ընդունէր Մայր Աթոռոյ եւ Առաքելական Ս. Աթոռոյ: Պատմութեան համար կուսանք պատճեններ այդ բոլրակցութեանց: Ս. Աթոռոյն Ամեն. Ս. Պատրիարք Հայրը 13 Դեկտ. 1940 թուակիր էր թիւ 291 հետեւեալ համակը ընդունած է Ամենայն Հայոց Հայրապետութեան Ամենապատիւ Տեղակալին:

Ամենապատիւ Պատրիարքին Սաղիմայ:

Տ. Մեսրոպայ Սրբազան Արքեպիսկոպոսի Նշանեան.

Ամենապատիւ Սրբազան Եղբայր,

Տարւոյն Նոյեմբեր 9-ի Զեռ հեռագիրը ստացուած է, որով հաղորդուած է հոգեւոր եւ աշխարհիկ երկու պատգամաւորներու ընտրութիւնը պահանջուած տեղեկութեամբ: Սակայն Զեռ անձի նկատմամբ պահպանուած է լուսթիւն: Ցանկալի է, որ առաջիկայ Ազգային-Եկեղեցական Ժողովը նման չլինի անցեալ 1932 թուականի Ժողովին, երբ արտասահմանից փոքրաթիւ ներկայացուցիչներ էին եկել Ժողովին մասնակցելու, այլ մենք տեսնենք Ժողովում բազմաթիւ պատգամաւորներ, որոնց թւում նաեւ հեղինակաւոր անձինք, որպէսզի Ժողովը հեղինակաւոր լինի, որ՝ մանաւանդ ներկայ պայմաններում, անհրաժեշտ է ե՛ւ այստեղի ե՛ւ արտասահմանի պաշտօնական շրջանների եւ ընդհանուր Հայութեան համար: Վերոյիշեալ նկատումներով՝ անվերապահօրէն կ'ասեմ, որ Էջմիածնի համար շատ ցանկալի կը լինի Ամենապատուութեանդ մասնակցութիւնը առաջիկայ Ապրիլ 10-ին գումարուելիք Ազգային-Եկեղեցական Ժողովում:

Անկախ վերոյիշեալից՝ անձամբ էլ ցանկալի կը համարէի Զեռ դալուստը Ս. Էջմիածին եւ Հայաստան, որպէսզի ականատես եւ իրազեկ լինիք հայ երկրի եւ հայ Ժողովրդի իրական վիճակին, տեսնէք նորա նուաճումները կուլտուրական եւ մտաւոր ապարէզներում: Ըստ իս՝ այս հանգամանքը չափազանց կարեւոր է արտասահմանում տարածուած եւ դեռ տարածուող լուրերի եւ պատկերացումների ո՛չ ճշմարիտ եւ միտումնաւոր լինելուն հաւատարմանալուն համար, որոնք յաճախ թիրիմացութիւններէ առիթ են տալիս, որ ես չափազանց վիշտակար հմ գտնում մեր Ժողովրդի չահերի տեսակէտով՝ եւ կողմնակից հմ, որ ճշմարտութիւնը երեան զայ եւ սուտն արմատախիլ լինի:

Կատարելապէս փոստահմ, որ իմ այս առաջարկ-խնդիրն յատուկ ուշադրութեան կ'առնուի Ամենապատուութեանդ կողմից եւ՝ ի զէպս հնարաւորութեան՝ կը յարգուի:

Եղբայրական ողջունելու,

Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետութեան
ԳԷՈՐԴ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Ամենայն Հայոց Հայրապետութեան Ամենապատիւ Տեղակալ Մրբազանի այս նամակը կարգադրեցաւ Ս. Արքուդյա Տեղեկն ժողովին մէջ, եւ հոն կարծիք յայտնուեցաւ թէ ներկայ պայմաններուն մէջ անորոշ ժամանակով Մրբազան Պատրիարք Հօր բացակայութիւնը կրնայ դժուարին կացութիւն մը առաջ բերել Ս. Արքուդյա մէջ: Դիտուեցաւ նաեւ թէ կարողիկոսական ընտրութեան բուականը կը զուգադիպի յառաջիկայ զատկական տօներուն, երբ նորին Ամենապատուութեան Տնտեսադեմի մէջ ներկայութիւնը անհրաժեշտ է՝ նախագանձելու համար եկեղեցական արարողութեանց ու հանդեսներուն, մանաւանդ ներկայիս՝ երբ այդ պէսքը լեցնող եպիսկոպոս չկայ Ս. Արքուդյա մէջ: Այս բանաւոր նկատմենով խորհրդուեցաւ նորին Ամենապատուութենէն որ չհեռանայ Տնտեսադեմէն (քանի որ առկէն Գեղ. Լուսարարապետը՝ Տ. Կիրեղ Թ. Վրդ. Իսապէտեան, իբրեւ ներկայացուցիչը Միաբանութեան, պիտի ուղեւորի Ս. Էջմիածին) եւ, երբ կարելի է, Ազգային - եկեղեցական ժողովին մասնակցելու համար արեւմտահայկական բարձրագոյն եկեղեցականներէն մին կարգէ իրեն փոխանորդ:

Ապրիլ 16ի թիւով Երեւանէն Ս. Արքուդյա Ամեն. Ս. Պատրիարք Հօր ուղղուած է հետեւեալ հեռագիրը.

Երեւան, 16 Ապրիլ

Ազգ. եկ. ժողովը ինքզինքը կը շնորհաւորէ երջանիկ արդիւնքին համար: Կը յուսանք թէ ի սէր ընդհանուրի օգտին մեր եկեղեցին պիտի մնայ միացեալ եւ իր ոյժը իր միութեան մէջ պիտի կայանայ: Կը ցաւինք Ձեր բացակայութեան համար: Համոզուած ենք թէ Ձեր Ամենապատուութիւնը պիտի օժանդակէ ընտրեալ Տեղակալին եւ Գեղ. Հոգեւոր Խորհուրդին: Տեղեկագիրը թղթատարով:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԵԿ. ԺՈՂՈՎԻ

Ս. Էջմիածինէն հասած այն հեռագրի «Երջանիկ արդիւնք» եւ «ընտրեալ Տեղակալ» բառերը կարծել տուին թէ Ազգային - եկ. ժողովը, որուն միակ օրակարգը պիտի ըլլար Հնորոնքին Ամենայն Հայոց Կաթողիկոսի, արդիւնաւորապէս կատարուէ իր պատշոնը, կարողիկոս ընտրելով Տեղակալ Տ. Գեորգ Արեւիկեցի: Սակայն ետէն տնկուելով որ ուրիշ տեղեր չկուած հեռագիրներէն մէկ քանիները Տեղակալ Գեորգ Արեւիկեցիին պատշոնը կը կրեն, յայտնի եղաւ թէ տակաւին չի ընտրուած Կաթողիկոսը եւ կատարուածն է միայն ընտրութիւնը կամ վերահաստատութիւնը Տեղակալին:

Կը սպասենք նորագոյն եւ լրացուցիչ տեղեկութեանց:

